BUSINESS տեսակի քարտի ներքո տրամադրվող վարկային գծի պայմաններն են՝

Վարկային գծի սահմանաչափ	Ոչ ավել քան բանկային հաշիվներով վերջին 6 ամիսների ընթացքում իրականացվող ամսական զուտ շրջանառության 20%-ը, ոչ ավել քան 20 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ, սակայն ոչ պակաս քան 500 հազ. ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ: Մինչև 6 ամիս սպասարկվող հաճախորդների դեպքում, որպես սահմանաչափի որոշման հիմք է ծառայելու Ամերիաբանկում իր հաշվեհամարներով առնվազն 3 ամսվա իրականացված զուտ շրջանառությունը և դրան նախորդող 3 ամիսների այլ բանկերի հաշվեհամարներով իրականացված զուտ շրջանառությունը:
Վարկային գծի ժամկետ	Մինչև 1 տարի
Օգտագործված վարկային գծի դիմաց հաշվարկվող տոկոսադրույք	• ՀՀ դրամի դեպքում՝ 19% տարեկան • ԱՄՆ դոլարի դեպքում՝ 18% տարեկան • Եվրոյի դեպքում՝ 17% տարեկան
Տոկոսների հաշվարկման արտոնյալ ժամկետ	Չի տրամադրվում
Տոկոսների մարում	Ամսական՝ կուտակված տոկոսագումարի չափով, ընդ որում, քարտային հաշվին յուրաքանչյուր մուտքի ժամանակ իրականացվում է այդ պահին հաշվարկված տոկոսների գանձում:
Վարկային հաշվի սպասարկման վճար	Սահմանաչափի 0.5%
Վարկային գծի ապահովածություն՝	• Դրամական հոսքեր • Սեփականատերերի երաշխավորություններ • Անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ ապահովվածություն:
Վարկ / լրացուցիչ ապահովություն հարաբերակցությունը	Մինչև 70%
Կիրառվող այլ պայմաններ և տուգանքներ ժամկետանց գումարի դիմաց	Ժամկետանց Վարկային գծի նկատմամբ դադարում է Գծի սահմաններում ստացված Վարկերի օգտագործման համար Պայմանագրով նախատեսված տարեկան Տոկոսի հաշվարկումը և այդ գումարի նկատմամբ սկսվում է հաշվարկվել և կիրառվել օրական 0.1% տոկոսադրույքը՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար: Ժամկետանց Վարկային գծի նկատմամբ կիրառվում է նաև տույժ՝ ժամկետանց գումարի 0,1% չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ 5 աշխատանքային օր ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց վարկի 2.0% չափով
Կիրառվող այլ պայմաններ և տուգանքներ ժամկետանց տոկոսի դիմաց	ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ հաշվարկվում և կիրառվում է 0,3% տոկոսադրույքը՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար, իսկ 5 աշխատանքային օր ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց տոկոսագումարի 5.0% չափով
Վաղաժամկետ պայմանագրի լուծում	Տույժ կամ տուգանք չի կիրառվում
Հայտի ուսումնասիրության ժամկետ	Մինչև 3 աշխատանքային օր՝ փաստաթղթերի ամբողջական փաթեթի ստացման օրվանից: Ուսումնասիրության ընթացքից ելնելով՝ վերոնշյալ ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան ևս 3 աշխատանքային օր
Մերժման հիմքերը	ԱՔՌԱ համակարգով հարցումների միջոցով մերժվելու են վերջին 2 տարիների ընթացքում դասակարգում ունեցող այն հաճախորդները, որոնց ժամկետանց պարտավորությունը վերջին 1 տարվա ընթացքում կազմել է 30 և ավել օր:
Վարկի պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճար*	500 000 ՀՀ դրամ

* վարկավորման պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճարը ենթակա է վճարման հաճախորդի կողմից, վերջինիս նախաձեռնությամբ և ցանկությամբ ներկայացված վերանայման հայտի բավարարման դեպքում՝ Բանկի համապատասխան ստորաբաժանման կողմից այդ հայտի հիման վրա կատարված վերլուծության եզրակացության հիմքով: Ընդ որում, որպես կանոն վարկավորման պայմանների վերանայման այլ դեպքերում սույն սակագինը ենթակա է գանձման Մեծ վարկային կոմիտեի որոշմամբ:

Ծանուցում

1. Հաճախորդների առանձին խմբերի համար կարող են սահմանվել պլաստիկ քարտերի սպասարկման հատուկ սակագներ: Այդ խմբերի նկատմամբ սույն սակագները կիրառվում են, եթե հատուկ սակագներով այլ բան չի նախատեսված: